

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՆԻՍՏԻ

Ներկա էին գիտական խորհրդի 61 անդամից 50-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ավարտական կուրսերում ամփոփիչ ատեստավորման կարգում փոփոխություններ կատարելու մասին

Ա. Թարվերդյան

2. 2016 թվականին հաստատված ՀԱԱՀ ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու մասին

Յու. Մարմարյան

3. Ընթացիկ հարցեր

Լսեցին.

Ռեկտոր Ա. Թարվերդյանի հաղորդումը ավարտական կուրսերում ամփոփիչ ատեստավորման գործընթացում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Նշվեց, որ ավարտական կուրսերում ամփոփիչ ավարտական քննությունների գործընթացի վերաբերյալ հանրապետության բուհերում առկա են տարբեր մոտեցումներ, ինչ էլ պատճառ հանդիսացավ հարցի քննարկումը տեղափոխել հանրապետության բուհերի ռեկտորների խորհրդի քննարկմանը: Ելնելով մասնագիտությունների առանձնահատկություններից, ռեկտոր Ա. Թարվերդյանը նշեց, որ բուհական համակարգում ամփոփիչ ատեստավորման միասնական մոտեցումը ապահովելու նպատակով առաջարկվում է ամփոփիչ ատեստավորումը սահմանել մեկ քննություն՝ ավարտական (դիպլոմային) աշխատանք (նախագիծ), իսկ անասնաբուժական բժշկագիտության մասնագիտություններում՝ մեկ պետական քննություն մասնագիտական համալիր առարկաներից:

Արտահայտվեցին. Ս. Դավեյանը, Գ. Դավթյանը, Ա. Վարդանյանը, Գ. Սանթրոսյանը, Ա. Աղաբաբյանը, Ա. Ոսկանյանը, Ա. Մելիքյանը, որոնք հավանության արժանացրեցին ներկայացված առաջարկությունը և առաջարկեցին ընդունել այն ըստ մասնագիտությունների և ատեստավորման ձևի: